Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ճապոնիա (Տոկիո), 2019 թվական, փետրվարի 12-14

4. Հրավիրող կողմը.

Ասիական զարգացման բանկ, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու վերաբերյալ հանդիպմանը:

Հիմնական նպատակն ուղղված էր ուսումնասիրելու համագործակցության և Ասիայի ու խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու հնարավորությունները:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու Ասիայի ու խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի անդամ-պետությունների, միջազգային կառույցների և

հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, փորձագետներ:

Հանդիպմանը ներկայացվեց զարգացող երկրների փորձը Ասիայի ու խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու վերաբերյալ: Ներկայացվեց զարգացող երկրների փորձն ու հեռանկարներն առողջության առաջնային մարտահրավերների, այդ թվում ոչ վարակիչ հիվանդությունների հաղթահարման և մեծահասակների խնամքի ուղղությամբ: Որոշվեցին ֆինանսավորման նվազեցման ազդեցության մեղմացման նորարարական լուծումները՝ համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու տեսանկյունից: Քննարկվեցին Ասիական զարգացման բանկի և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության, Գլոբալ ֆոնդի, Համաշխարհային բանկի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության և այլ գործընկերների հետ հնարավոր համագործակցությունը՝ համատեղ ներդրումներ, տեխնիկական աջակցություն ստանալու նպատակով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը:

Ներկայացվեցին նշված ոլորտում Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները, գրանցած հաջողություններն ու հետագա քայլերը:

Այցի ընթացքում, օգտվելով ընձեռված հնարավորությունից, ՀՀ ԱԳՆ օժանդակությամբ, հանդիպում կայացավ նաև Ճապոնիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրանտ Պողոսյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին առողջապահության ոլորտի ներկայիս բարեփոխումների ընթացքը, արծարծվեցին առողջապահության նախարարության առաջնահերթ ուղղությունների կյանքի կոչման առկա խնդիրների և հնարավորությունների վերաբերյալ հարցեր: Դեսպանը պատրաստակամություն հայտնեց ամրապնդելու երկու երկրի համագործակցությունը՝ առողջապահության ոլորտի աշխատանքներում հնարավոր ներդրումային ծրագրերի, ճապոնացի և կորեացի գործընկերների ներգրավման ուղղությամբ:

Հայկական պատվիրակությունը հանդիպեց նաև Ասիական զարգացման բանկի առողջապահական ծրագրերի ղեկավար Պատրիկ Օսեվեին և Ասիական զարգացման բանկի տարածաշրջանային տնօրեն Ռիե Հիռաոկայի հետ: Կողմերը քննարկեցին ներկայումս իրականացվող տեխնիկական աջակցությունը, ինչպես նաև առողջապահության ֆինանսավորման ոլորտում բժշկական ծառայությունների որակի զարգացման հայեցակարգի մշակմանն առնչվող հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման հնարավորություն ունեցան ծանոթանալու Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի զարգացող անդամ երկրների առաջավոր փորձին, ինչպես նաև ուրվագծել հետագա գործողությունները՝ միջազգային փորձագետների կողմից առաջարկվող ուղղություններով:

Տարբեր երկրների առողջապահության ոլորտի ներկայացուցիչների, այդ թվում Ասիական զարգացման բանկի և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության ներկայացուցիչների հետ քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղղություններն ու հեռանկարները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց պայմանավորված ուղղություններով համատեղել երկրների ջանքերը և ակտիվացնել փոխգործակցությունը համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

2019թ. փետրվարի 18

X _____